



## ՄԱԿ-ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Միավորված ազգերի կազմակերպությունը ստեղծվել է 1945թ. հոկտեմբերի 24-ին 51 երկրների կողմից, որոնք պարտավորվեցին միջազգային համագործակցության և համընդհանուր անվտանգության հաստատման միջոցով հասնել խաղաղության պահպանմանը: Այսօր աշխարհի գրեթե բոլոր ազգերը մտնում են ՄԱԿ-185 երկրներ դաշինքի մեջ:

Միավորված ազգերի կազմակերպության անդամ դառնալով՝ պետությունները համաձայնեցին ընդունել Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, այն է՝ միջազգային հարաբերությունների հիմնական սկզբունքները սահմանող միջազգային դաշնագիրը: Կանոնադրության համաձայն՝ Միավորված ազգերն ունեն շորս նպատակ. խաղաղություն և անվտանգություն պահպանել միջազգային ասպարեզում, բարեկամական հարաբերություններ հաստատել ազգերի միջև, համընդհանուր ջանքերով խթանել միջազգային խնդիրների լուծմանն ու մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանելուն ուղղված գործընթացը և ի վերջո հանդես գալ որպես ազգերի գործողությունների համաձայնեցումն ապահովող կենտրոն:

Միավորված ազգերի կազմակերպության անդամ երկրներն անկախ են: Միավորված ազգերի կազմակերպությունը չի ենթադրում համաշխարհային կառավարում և չի սահմանում օրենքներ: Սակայն նա ապահովում է միջազգային հակամարտությունների հարթեցմանն ուղղված ուղիների մշակումը և համատարած ազդեցության խնդիրների լուծման համար անհրաժեշտ քաղաքականության ձևավորումը: ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրները՝ մեծ և փոքր, հարուստ և աղքատ, անկախ քաղաքական տեսակետների և սոցիալական համակարգերի բնույթից, վերոհիշյալ գործընթացում ունեն ձայնի և ընտրության իրավունք:

Միավորված ազգերի կազմակերպությունն ունի վեց հիմնական մարմին: Դրանցից հինգը՝ Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և սոցիալական հարցերով խորհուրդը, Հոգաբարձուների խորհուրդը և Քարտուղարությունը, գտնվում են Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում: Վեցերորդ մարմինը՝ Արդարադատության միջազգային դատարանը, գտնվում է Հասագյում (Նիդեռլանդներ):

### **Գլխավոր ասամբլեա**

ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրները ներկայացված են Գլխավոր ասամբլեայում: Վերջինս իրենից ներկայացնում է ազգերի մի խորհրդարան, որի նիստերում քննարկվում են աշխարհի ամենահարատապ խնդիրները: Կազմակերպության յուրաքանչյուր անդամ երկիր ունի մեկ ձայն: Կարևոր հարցերը, ինչպիսին են միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը վերաբերող հանձնարարականները, նոր անդամների անդամագրությունը, ՄԱԿ-ի և խաղաղության պահպանման միջոցառումներին հատկացվող բյուջեն, որոշվում են ձայների երկու երրորդի մեծամասնությամբ: Մնացած հարցերը որոշվում են պարզ մեծամասնությամբ: Վերջին տարիներին հատուկ ջանքեր են գործադրվել, որպեսզի որոշումները կայացվեն ավելի շուտ համաձայնության, քան թե պաշտոնական քվեարկության միջոցով:

Ասամբլեայի 1998/1999 թվականի նստաշրջանում քննարկման էին դրված 166 տարաբնույթ հիմնահարցեր, ներառյալ խաղաղության և անվտանգության, զինաթափման, կայուն զարգացման, ՄԱԿ-ի վերակազմավորման, շրջակա միջավայրի պահպանման, ինչպես նաև 2000 թվական մտներու հետ կապված համակարգչային ծրագրերի փոփոխություններին առնչվող խնդիրներ: Ասամբլեան չի կարող պարտադրել որևէ երկրի կամքը, նրա հանձնարարականները ներկայացնում են միջազգային հանրության կարծիքն ու ազգերի բարոյական վարկը:

Գլխավոր ասամբլեան կանոնավոր կերպով գումարվում է տարեկան մեկ անգամ՝ սեպտեմբերից մինչև դեկտեմբեր: Անհրաժեշտության դեպքում այն կարող է շարունակվել ավելի երկար, իսկ արտակարգ իրավիճակների կապակցությամբ գումարել հատուկ կամ արտահերթ նիստ: Նիստերից ազատ շրջանում Ասամբլեայի աշխատանքներն իրականացվում են վեց հիմնական հանձնաժողովների՝ այժմ մասնաճյուղերի և ՄԱԿ-ի



Քարտուղարության կողմից:

**Անվտանգության խորհուրդ**

Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության՝ Անվտանգության խորհուրդը հիմնականում պատասխանատու է աշխարհի խաղաղության և անվտանգության պահպանման համար: Խաղաղությանը սպառնացող վտանգի դեպքում Խորհուրդը կարող է նիստ հրավիրել ցանկացած պահի, լինի զիջեր թե ցերեկ:

Անվտանգության խորհուրդն ունի տասնհինգ անդամ երկիր: Գրանցից հինգը՝ Չինաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, մշտական անդամներ են: Մնացած տասն ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից երկու տարի ժամկետով: Վերջին տարիներին անդամ երկրները քննարկել են խորհրդի կազմում փոփոխությունների հնարավորությունն այն նկատառումով, որ արտացոլվի այսօրվա քաղաքական և տնտեսական իրավիճակը: Խորհրդում որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է 9 կողմ ձայների առկայությունը: Եթե մշտական անդամներից մեկը դեմ քվեարկի կամ որոշման վրա «վետո» դնի, որոշումը չի կայացվի: Բացառություն են ընթացակարգային հարցերի վերաբերյալ քվեարկությունները: Բոլոր անդամ երկրները պարտավոր են իրականացնել խորհրդի կայացրած որոշումները:

Եթե նիստի օրակարգի հարց է դառնում միջազգային խաղաղությանը սպառնացող վտանգը, խորհուրդը նախ և առաջ փորձում է հակասությունները հարթել խաղաղ ճանապարհով: Նա կարող է իրավիճակի լուծման ուղիներ առաջարկել կամ հանդես գալ որպես միջնորդ: Չինված պայքարի դեպքում խորհուրդը փորձում է հրադադար ապահովել: Հանդես գալով խաղաղարար առաքելությամբ՝ խորհուրդը կարող է նպաստել կողմերի միջև զինադադարի պահպանմանն ու խոչընդոտել հակամարտող ուժերի բախմանը:

Խորհուրդը կարող է միջոցներ ձեռք առնել՝ ապահովելու ընդունված որոշումների կենսագործումը: Կարող է պարտադրել տնտեսական պատժամիջոցներ կամ արգելել զենքի առևտուրը: Բացառիկ դեպքերում անդամ երկրներն ունեն Անվտանգության խորհրդի թույլտվությունը՝ օգտագործելու բոլոր անհրաժեշտ միջոցները համատեղ ռազմական գործողությունների վերաբերյալ ընդունված որոշումների կենսագործումն ապահովելու համար:

Նոր Գլխավոր քարտուղարի նշանակման և ՄԱԿ-ի կազմում

նոր երկրների անդամակցության առնչությամբ խորհուրդը կարող է հանձնարարականներով հանդես գալ Գլխավոր ասամբլեայի առաջ:

***Տնտեսական և սոցիալական խորհուրդ***

Տնտեսական և սոցիալական խորհուրդը, լիազորված լինելով Գլխավոր ասամբլեայի կողմից, կորդինացնում է Միավորված ազգերի կազմակերպության և ՄԱԿ-ի ընտանիքի տնտեսական և սոցիալական ոլորտի աշխատանքները: Հանդիսանալով միջազգային տնտեսական և սոցիալական հարցերով զբաղվող, ինչպես նաև քաղաքականության ձևավորման հանձնարարականներ մշակող գլխավոր համաժողով՝ խորհուրդը կարևորագույն դեր է խաղում կայուն զարգացման ոլորտում միջազգային համագործակցության խթանման գործում: Խորհուրդը նաև խորհրդատվական երկխոսություններ է ունենում հասարակական կազմակերպությունների հետ՝ կենսական կապ ապահովելով Միավորված ազգերի կազմակերպության և քաղաքացիական հասարակության միջև:

Խորհրդի մեջ ընդգրկված են 54 անդամ երկրներ, որոնք ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից երեք տարի ժամկետով: Նա տարին մեկ գումարում է նիստ՝ մեկ ամիս տևողությամբ: Նիստը հաջորդաբար անցկացվում է Նյու Յորքում և Ժնևում: Նախագահների հատուկ նիստում քննարկվում են կարևորագույն տնտեսական և սոցիալական հարցեր: Սկսած 1998 թվականից Խորհուրդն ընդլայնեց իր քննարկումների ոլորտը՝ ընդգրկելով նաև հումանիտար բնույթի հարցեր:

Խորհրդի շուրջտարյա աշխատանքներն իրականացվում են մասնաճյուղերի կողմից, որոնք կանոնավոր հանդիպումներ են ունենում և հաշվետու են Խորհրդի առաջ: Մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովն, օրինակ, վերահսկում է մարդու իրավունքների պահպանումը ողջ աշխարհում: Մնացած մասնաճյուղերն անդրադառնում են այնպիսի խնդիրների, ինչպիսին են սոցիալական զարգացումը, կանանց կարգավիճակը, հանցագործությունների կանխարգելումը, թմրադեղերի դեմ պայքարն ու շրջակա միջավայրի պահպանումը: Հինգ տարածաշրջանային հանձնաժողովները խթանում են տնտեսական զարգացումն ու ամրապնդում համապատասխան ոլորտների տնտեսական կապերը:



### ***Հոգաբարձուների խորհուրդ***

Հոգաբարձուների խորհուրդը հիմնվել է 7 անդամ երկրների կողմից կառավարվող 11 ենթակա տարածքների միջազգային վերահսկումն իրականացնելու նպատակով: Խորհրդի ստեղծման նպատակն էր նաև համապատասխան քայլեր ձեռնարկել՝ վերոհիշյալ տարածքներում ապահովելու ինքնորոշման կամ անկախության հասնելու գործընթացը:

Մինչ 1994 թվականը բոլոր ենթակա տարածքները ձեռք բերեցին ինքնորոշում կամ անկախություն՝ կամ որպես առանձին պետություններ և կամ միանալով հարևան անկախ երկրներին: Վերջինն այդ կազմում խաղաղօվկիանոսյան կղզիների ենթակա տարածքն էր (Պալաու), որի վարչական կառավարումն իրականացվում էր Միացյալ Նահանգների կողմից, և որը դարձավ ՄԱԿ-ի 185-րդ անդամ երկիրը:

Քանի որ Հոգաբարձուների խորհուրդը ավարտել է իր առաքելությունը, այժմ կազմում ունի ընդամենը Անվտանգության Խորհրդի 5 մշտական անդամ: Խորհուրդը փոփոխություններ է մտցրել ընթացակարգի դրույթների մեջ, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք համապատասխանեն ժամանակի և իրավիճակի պահանջներին:

### ***Արդարադատության միջազգային դատարան***

Արդարադատության միջազգային դատարանը, այլ կերպ կոչված, Համաշխարհային դատարանը, ՄԱԿ-ի իրավական հարցերով գլխավոր մարմինն է: Դատարանը կազմված է 15 դատավորներից, որոնք ընտրվում են Գլխավոր Ասամբլեայի և Անվտանգության խորհրդի կողմից, և կոչված է լուծելու երկրների միջև ծագած տարածայնությունները: Երկրների մասնակցությունը դատավարությանը կամավոր է, սակայն մասնակցության դեպքում տվյալ երկիրը պարտավոր է ենթարկվել դատարանի կայացրած վճռին: Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է նաև Գլխավոր ասամբլեայի առջև հանդես գալ խորհրդատվական առաջարկություններով:

### ***Քարտուղարությունը***

Քարտուղարությունը պատասխանատու է Միավորված ազգերի կազմակերպության հիմնական և վարչական աշխատանքների իրականացման համար: Այդ գործընթացը ղեկավարում են Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդն ու մյուս մարմինները: Քարտուղարությունը

գլխավորում է Գլխավոր քարտուղարը, որն անհրաժեշտության դեպքում իրականացնում է լրացուցիչ աշխատակազմի նշանակումները և պատասխանատու է համընդհանուր վարչական կառավարման համար:

Քարտուղարությունը բաղկացած է գործակալություններից և տարածաշրջանային գրասենյակներից: Ընդհանուր աշխատակազմը բաղկացած է 160 երկրներից եկած 8700 ծառայողներից: Պատասխանատու գրասենյակներն են Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական գրասենյակը Նյու Յորքում, ինչպես նաև ՄԱԿ-ի Ժնևի, Վիեննայի և Նայրոբիի գրասենյակները:

## ՄԱԿ-ի ՀԱՄԱԿԱՐԳԸ

Միջազգային արժույթային հիմնադրամը, Համաշխարհային բանկը և 12 այլ անկախ կազմակերպություններ, որոնք հայտնի են որպես «հատուկ գործակալություններ», կապված են ՄԱԿ-ի հետ համագործակցության պայմանագրերով: Այս գործակալությունները, այդ թվում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը, ինքնավար մարմիններ են՝ ստեղծված միջկառավարական համաձայնագրով: Նրանց միջազգային պատասխանատվության շրջանակներում ընդգրկված են տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահական և այլ հարակից ոլորտներ: Նրանցից մի քանիսը, ինչպես օրինակ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը և Համընդհանուր փոստային միությունը, ավելի երկար տարիների պատմություն ունեն, քան ինքը՝ ՄԱԿ-ը: Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը ևս կապված է ՄԱԿ-ի հետ հատուկ պայմանագրով:

Պետք է ավելացնել, որ ՄԱԿ-ի մի շարք գրասենյակներ, ծրագրեր և հիմնադրամներ, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակը (UNHCR), ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի գրասենյակը (UNDP) և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF), իրենց գործունեությունն ուղղել են աշխարհի



մարդկության տնտեսական և սոցիալական բարեկեցության հաստատմանը: Այս գրասենյակները հաշվետու են Գլխավոր ասամբլեայի կամ Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի առաջ:

Այս բոլոր կազմակերպություններն ունեն իրենց կառավարման մարմինները, բյուջեն և քարտուղարությունը: Միավորված ազգերի կազմակերպության հետ միասին նրանք կազմում են ՄԱԿ-ի ընտանիքը և կամ ՄԱԿ-ի համակարգը: Նրանք ունեն չափազանց կորորինացված, բայց և տարաբնույթ գործողությունների ծրագրեր:

## ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ՄԱԿ-ը ԽԱՂԱԴՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Միավորված ազգերի գերագույն առաքելությունը խաղաղության պահպանումն է: Համաձայն կանոնադրության դրույթների, ՄԱԿ-ի անդամ երկրները համաձայնվել են տարածայնությունները լուծել խաղաղ ճանապարհով և զերծ մնալ այլ պետությունների նկատմամբ ուժ գործադրելուց:

Տարիներ շարունակ Միավորված ազգերի կազմակերպությունը կարևոր դեր է խաղացել միջազգային ճգնաժամերի և երկարատև հակամարտությունների կարգավորման ուղղությամբ: Նա դժվարին աշխատանքներ է իրականացրել խաղաղության ստեղծման ու պահպանման, ինչպես նաև հումանիտար օգնության ոլորտներում: Նրա կողմից աշխատանքներ են տարվել հակամարտությունների բռնկումը կասեցնելու ուղղությամբ: Իսկ ետհակամարտության շրջանում ՄԱԿ-ը կորորինացված գործողություններով փորձել է պարզել բռնության արմատական պատճառները և սկիզբ դնել կայուն խաղաղության:

ՄԱԿ-ի կողմից ձեռնարկված քայլերը նշանակալի արդյունքներ են ունեցել: ՄԱԿ-ի ջանքերով հաղթահարվել են Բեռլինյան ճգնաժամը (1948-1949թթ.), Կուբայի հրթիռային ճգնաժամը (1962թ.), Միջին Արևելքի ճգնաժամը (1973թ.): ՄԱԿ-ի հովանավորությամբ խաղաղ լուծում ստացավ Իրան-Իրաք (1988թ.) պատերազմը, իսկ հաջորդ տարվա ընթացքում, շնորհիվ նրա հովանավորած բանակցությունների, սովետական զորքերը

դուրս բերվեցին Աֆղանստանից: ՄԱԿ-ի միջամտությամբ վերականգնվեց Քուվեյթի անկախությունը: 1990թ. դադարեցվեցին քաղաքացիական պատերազմները Կամբոջայում, Էլ Սալվադորում, Գվատեմալայում և Մոզամբիկում, վերահաստատվեցին ժողովրդավարական սկզբունքներով ընտրված կառավարությունները Հաիթիում և Սիերա Լիոնեում, խաղաղ լուծում ստացան կամ կասեցվեցին հակամարտությունները մի շարք այլ երկրներում:

### ***Չինաքափում***

Միավորված ազգերի կազմակերպության գերնպատակները երկուսն են. դադարեցնել սպառազինության տարածումը, կրճատել և վերջնականապես վերացնել զանգվածային ոչնչացման զենքերը: ՄԱԿ-ը մշտապես հանդիսացել է զինաքափման բանակցություններ վարող, հանձնարարականներ մշակող և հետազոտություններ նախաձեռնող համաժողով: Նա հովանավորում է զինաքափությունների վերաբերյալ բազմակողմանի բանակցությունները գիտաժողովներում և միջազգային նշանակության այլ ատյաններում: Այս բանակցությունների արդյունքում կնքվել են այնպիսի պայմանագրեր, ինչպիսին են Միջուկային զենքի տարածումը կասեցնող դաշնագիրը (1968թ.), Միջուկային զենքի փորձարկումների արգելման միջազգային դաշնագիրը (1996թ.) և Միջուկային զենքից ազատ գոտիներ հաստատող պայմանագրերը:

Կան նաև այլ պայմանագրեր, որոնց համաձայն արգելվում են քիմիական (1992թ.) և կենսաբանական զենքի (1972թ.) կատարելագործումը, արտադրությունն ու պահեստավորումը, արգելվում կամ սահմանափակվում են այլ տեսակի զենքերը: 1997թ. ավելի քան հարյուր ազգեր ստորագրեցին ականները օրենքից դուրս համարող Օտտավայի կոնվենցիան: ՄԱԿ-ը հորդորում է բոլոր ազգերին հավատարիմ մնալ այն պայմանագրերին, որոնց համաձայն արգելվում են պատերազմի զանգվածային ոչնչացման զենքերը: Գլխավոր ասամբլեան հաստատել է ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովի հանձնարարականը, որով նախատեսվում է մինչև 2001 թվականը հրավիրել զենքերի առևտուրն արգելող միջազգային գիտաժողով:

Վիեննայում հիմնված Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, որպես երաշխիք ունենալով մի խումբ համաձայնագրեր, վերահսկում է, որ խաղաղ նպատակների





համար նախատեսված միջուկային զենքերը չվերածվեն ռազմական նպատակներին ծառայող զենքերի: Իսկ Հասագայում հիմնված Քիմիական զենքի արգելման կազմակերպությունը ամբողջ աշխարհում տեղեկատվություն է հավաքում քիմիական զենքերի վերաբերյալ և կանոնավոր ստուգումներ անցկացնում պարզելու համար, թե արդյո՞ք երկրները հավատարիմ են քիմիական զենքի վերաբերյալ կոնվենցիայի հիմունքներին:

### ***Խաղաղության հաստատում***

ՄԱԿ-ի կողմից խաղաղության հաստատման գործընթացը ենթադրում է ընդդիմադիր կողմերի միջև փոխըմբռնման ձեռքբերում դիվանագիտության միջոցներով: Միջազգային ասպարեզում խաղաղության և անվտանգության պահպանման նկատառումով Անվտանգության խորհուրդը կարող է առաջարկություններ անել՝ նպատակ ունենալով բանակցությունների կամ, ասենք, Միջազգային դատարանին դիմելու միջոցով կասեցնել հակամարտությունները, վերականգնել կամ պահպանել խաղաղությունը տարածաշրջանում:

Գլխավոր քարտուղարը ևս մեծ դեր է խաղում խաղաղության հաստատման գործում: Նա կարող է Անվտանգության խորհրդի ուշադրությունը հրավիրել միջազգային խաղաղության և անվտանգության համար սպառնալիք հանդիսացող ցանկացած հարցի վրա: Նա կարող է օգտագործել ցանկացած գրասենյակ, որն իր հայեցողությամբ նպատակահարմար է, այսպես կոչված, «եռնաբեմում» անձնապես կամ հատուկ պատվիրակների միջոցով միջնորդական գործընթացը կամ դիվանագիտական միջոցառումները ապահովելու համար: Գլխավոր քարտուղարը կարող է կիրառել նաև «կանխարգելող դիվանագիտություն», որը նպատակ ունի լուծել վիճարկվող հարցերը նախքան դրանց սրվելը: Նա կարող է նաև աշխատախմբեր գործուղել տվյալ տարածաշրջան փաստեր հավաքելու առաքելությամբ, օժանդակել տեղում ձեռնարկված և խաղաղության պահպանմանն ուղղված միջոցառումներին, հիմնել քաղաքական հարցերով ՄԱԿ-ի տեղական գրասենյակ՝ նպատակ ունենալով նպաստել ընդդիմադիր կողմերի միջև փոխըմբռնման հաստատմանը:

### ***Խաղաղաստեղծ միջոցառումներ***

ՄԱԿ-ը մեծ մասամբ միջոցառումներ է ձեռնարկում՝ ուղղված բռնության հիմքում ընկած պատճառների վերացմանը: Խաղաղության հաստատման հիմնական բաղադրիչը երկրի

գարգացմանը նպաստող միջոցառումներն են: ՄԱԿ-ի համակարգի աջակցությամբ, ինչպես նաև դոնոր երկրների, տեղական կառավարության և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ, Միավորված ազգերի կազմակերպության գործողությունները նպաստակ ունեն խթանել կառավարման գործընթացը, պաշտպանել քաղաքացիական օրենքներն ու կարգուկանոնը, արդար ընտրություններն ու մարդու իրավունքները այն երկրներում, որոնք պայքարում են ետհակամարտության շրջանի հետևանքների դեմ: Միաժամանակ նա օգնում է հակամարտություններից տուժած երկրներին՝ վերականգնելու իրենց վարչական, առողջապահական, կրթական և այլ ծառայությունները:

Որոշ միջոցառումներ, օրինակ, 1989թ. ՄԱԿ-ի կողմից ընտրությունների վերահսկումը Նամիբիայում ակամազերծման ծրագրերը Մոզամբիկում, քաղաքացիական պատրաստակամության դասընթացները Հաիթիում, տեղի են ունենում ՄԱԿ-ի խաղաղապահական գործունեության շրջանակներում և կարող են շարունակվել ՄԱԿ-ի առաքելության ավարտից հետո: Որոշ այլ միջոցառումներ անցկացվում են տեղական կառավարությունների խնդրանքով. ինչպես օրինակ Լիբերիայում, որտեղ ՄԱԿ-ը ունի խաղաղության հաստատմանը օժանդակող գրասենյակ, Կամբոջայում, որտեղ ՄԱԿ-ը ունի մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակ, Գ-վատենալայում, որտեղ ՄԱԿ-ը աջակցում է խաղաղապահական այն համաձայնագրերի կենսագործմանը, որոնք իրենց ազդեցությունն ունեն ազգային կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա:

#### ***Խաղաղապահական միջոցառումներ***

Անվտանգության խորհուրդը մշակում է ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների ծրագիրը, սահմանում է գործունեության շրջանակները և ՄԱԿ-ին տալիս է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման իրավունք (մանդատ): Գործողությունների գերակշռող մասն իրենցից ներկայացնում են ռազմական բնույթի պարտավորություններ, ինչպես օրինակ, հրադադարի պահպանում կամ բուֆերային գոտու ստեղծում, մինչ քանակցող կողմերը երկարաժամկետ լուծում են որոնում: Այլ գործողությունների համար կարող է պահանջվել քաղաքացիական ոստիկանության առկայությունը կամ քաղաքացիների մասնակցությունը ընտրությունների կազմակերպման և մարդու



իրավունքների վերահսկման գործընթացին: Ինչ վերաբերում է նախկին Հարավսլավիայում ծավալված գործողություններին, ապա դրանք նպատակ էին հետապնդում կանխել թշնամական հարաբերությունների սրումը: ՄԱԿ-ը ծավալել է նաև գործողություններ, որոնց նպատակն էր տարածաշրջանային կազմակերպությունների խաղաղապահ ուժերի հետ միասին վերահսկել խաղաղության վերաբերյալ պայմանագրերի կենսագործումը:

Խաղաղապահ գործողությունները կարող են տևել ամիսներ կամ տարիներ: ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների գոտին Հնդկաստանի և Պակիստանի միջև անցնող հրադադարի գոտում (Ջամու և Քաշմիր) ստեղծվել է 1949թ. իսկ խաղաղապահ ջոկատները հաստատվել են Կիպրոսում 1964 թվականից: Ի տարբերություն դրան, ՄԱԿ-ը կարողացավ ավարտել իր առաքելությունը Լիբիայի և Չադի միջև ընկած Աուգուի միջանցքում մեկ ամսից քիչ ավելի ժամանակահատվածում:

Քանի որ ՄԱԿ-ը ծավալել է իր առաջին խաղաղապահ գործողությունները 1948թ., մոտ 118 երկրներ կամավոր տրամադրել են ավելի քան 750 000 հոգուց բաղկացած ռազմական և քաղաքացիական ոստիկանական աշխատակազմ: Այսօր մոտ 12500 հոգուց բաղկացած ռազմական և քաղաքացիական ոստիկանական աշխատակազմը ընդգրկված է 14 խաղաղապահ գործողություններում:

## **ԻՆՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՄԱԿ-ը ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՔԻ ՊԼՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ**

ՄԱԿ-ի ջանքերի շնորհիվ կառավարությունները հարյուրավոր բազմակողմանի պայմանագրեր են կնքել, որոնք աշխարհը դարձնում են առավել անվտանգ և առողջ միջավայր. բոլորիս համար ապահովում արդարության և հնարավորությունների առավել ընդգրկուն սահմաններ: Միջազգային օրենքի և մարդու իրավունքների մասին կանոնադրության այս մարմինը ՄԱԿ-ի ամենանշանակալից նվաճումներից է:

### ***Մարդու իրավունքները***

Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. հռչակված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը սահմանում է բոլոր մարդկանց՝ տղամարդ թե կին, հիմնական իրավունքներն ու ազատությունները. այդ թվում և կյանքի, ազգային պատկանելության, մտքի, խղճի, կրոնի, աշխատանքի, կրթության, երկրի կառավարման մեջ մասնակցության ազատությունը:

Այս իրավունքները իրավաբանորեն պարտավորեցնող են՝ շնորհիվ երկու միջազգային դաշնագրերի, որոնց միացել է պետությունների գերակշռող մասը: Դաշնագրերից մեկը ներկայացնում է մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, իսկ մյուսը՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքները: Հռչակագրի հետ միասին դրանք կազմում են Մարդու իրավունքների միջազգային օրինագիծը:

Այս հռչակագիրը հիմք հանդիսացավ մարդու իրավունքների վերաբերյալ ավելի քան 80 կոնվենցիաների և հռչակագրերի համար, ներառյալ ռասայական խտրականության, կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու, երեխաների իրավունքների մասին կոնվենցիաները, փախստականների կարգավիճակի և ցեղասպանության կանխարգելման մասին կոնվենցիաները, ինքնորոշման, բռնի անհետացումների ու զարգացման վերաբերյալ հռչակագրերը:

Արդեն գրեթե ավարտելով չափանիշների մշակման աշխատանքները՝ ՄԱԿ-ն իր գործունեության ծանրության կենտրոնը մարդու իրավունքների պահպանման ուղղությամբ աշխատանքներից տեղափոխում է դեպի մարդու իրավունքների մասին օրենքների կենսագործման ոլորտ: Մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարը, որը զբաղվում է մարդու իրավունքներին առնչվող ՄԱԿ-ի բոլոր գործողությունների կոորդինացմամբ, համագործակցում է կառավարությունների հետ մարդու իրավունքների պահպանման միջոցառումների բարելավման, խախտումների կանխարգելման և չարաշահումների բացահայտման ուղղությամբ: Մարդու իրավունքների ՄԱԿ-ի հանձնաժողովը՝ որպես միջկառավարական մարմին, հանդիպումներ է կազմակերպում հասարակական կազմակերպությունների հետ պետությունների կողմից մարդու իրավունքների կենսագործումը վերանայելու համար: Հանձնաժողովը նշանակում է անկախ փորձագետներ՝ «հատուկ զեկուցողներ», որոնք պարտավոր են տեղեկացնել մարդու իրավունքների խախտումների առանձին դեպքերի մասին կամ



հետագոտել մարդու իրավունքների կենսագործման ոլորտներն առանձին երկրներում: ՄԱԿ-ի ԺՆԿի գրասենյակում հասարակության համար գործում է հատուկ ուղիղ կապի շտաբօրյա ֆաքս (41 22 917 0092), որով կարելի է հաղորդել մարդու իրավունքների խախտումների մասին:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գրասենյակները կոչված են վաղօրոք նախագգուշացնելու խախտումների մասին, կասեցնելու ընդհարումները, բացահայտելու ընդհարումների արմատական պատճառները: Մարդու իրավունքների վերաբերյալ միջոցառումները կազմում են ՄԱԿ-ի մի շարք խաղաղապահ գործողությունների բաղկացուցիչը, ինչպես օրինակ, Վրաստանում և Գվատեմալայում: Հաիթիում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում ՄԱԿ-ի միասնական կազմակերպությունն իրականացնում է այդ աշխատանքը: Ընդհանուր առմամբ, մարդու իրավունքներին առնչվող ՄԱԿ-ի գործողություններն անցկացվում են 15 երկրներում կամ տարածքներում:

Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի սերմանումը առաջնային տեղ է զբաղեցնում ՄԱԿ-ի՝ կայուն զարգացման օժանդակությանն ուղղված գործողություններում: Զարգացման իրավունքը մասնավորապես դիտվում է որպես շարժում գործընթացի մի մաս, որը միավորում է բոլոր քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքները, որոնք և ապահովում են անհատի բարեկեցությունը հասարակության մեջ: Կայուն զարգացման իրավունք ձեռք բերելու համար անհրաժեշտ է արմատախիլ անել աղքատությունը, մի բան, որ հանդիսանում է ՄԱԿ-ի գերնպատակը:

### ***Միջազգային օրենք***

ՄԱԿ-ի կանոնադրությունը մասնավորապես կոչ է անում Միավորված ազգերի կազմակերպությանը առաջատար մեթոդներով համակարգել և զարգացնել միջազգային օրենքները: Այս աշխատանքի արդյունքում ստեղծված կոնվենցիաները, դաշնագրերը և չափանիշները առաջադրում են գործողությունների մի շրջանակ, որը խթանում է միջազգային ասպարեզում խաղաղության և անվտանգության, տնտեսական և սոցիալական զարգացումը: Այդ կոնվենցիաները ստորագրող պետությունները իրավաբանական պարտավորություն են կրում: Որոշ կոնվենցիաներ պետությունների միջև օրենքի կառավարման հարաբերությունների հիմքն են կազմում, ինչպես օրինակ

դիվանագիտական հարաբերությունների մասին կոնվենցիան կամ միջազգային գետերի օգտագործումը կարգավորող կոնվենցիան: Ծովերի մասին օրենքի կոնվենցիայի համաձայն, բոլոր երկրներն իրավունք ունեն հավասարապես օգտվելու օվկիանոսի բարիքներից՝ միաժամանակ պահպանելով աղտոտումից և նպաստելով նավարկումների և հետազոտությունների կատարման ազատությանը: Թմրադեղերի ապօրինի առևտուրն արգելող կոնվենցիան թմրադեղերի առևտուրն արգելող ամենագլխավոր միջազգային պայմանագիրն է:

Միջազգային առևտրի մասին օրենքի ՄԱԿ-ի հանձնաժողովը մշակում է կանոններ և ուղեցույցներ, որոնք կոչված են համապատասխանեցնելու և դյուրին դարձնելու միջազգային առևտուրը կարգավորող օրենքները:

ՄԱԿ-ը նաև առաջինն է, որ քայլեր ձեռնարկեց միջազգային բնապահպանության օրենքի վերաբերյալ: Այնպիսի համաձայնագրեր, ինչպիսին են անապատացման դեմ պայքարի կոնվենցիան, օգոնի շերտի մասին կոնվենցիան, վնասակար թափոնները սահմանից դուրս բեռնաթափելու մասին կոնվենցիան, դեկավարվում են ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի պահպանության ծրագրի կողմից:

Ահաբեկչության դեմ պայքարի նպատակով ՄԱԿ-ը և նրա մասնագիտացված գործակալությունները մշակել են միջազգային համաձայնագրեր, որոնք և հանդիսանում են ահաբեկչության դեմ պայքարի հիմնական իրավական գործիքները:

#### ***Վերջ անպատիժ մնալուն***

Մարդասիրական օրենքների զանգվածային խախտումները նախկին Հարավսլավիայում տեղի ունեցած կոչվների ժամանակ հանգեցրին այն բանին, որ Անվտանգության խորհուրդը 1993թ. ստեղծեց միջազգային տրիբունալ դատապարտելու համար այդ հակամարտության ընթացքում պատերազմի հանցանքների մեջ մեղադրվող անձանց: 1994թ. խորհուրդը ստեղծեց երկրորդ տրիբունալը, որը պետք է լսեր Ռուանդայի ցեղասպանության մեղադրյալներին: Տրիբունալները մի շարք ամբաստանյալներ են կանգնեցրել դատարանի առաջ: 1998թ. Ռուանդայի տրիբունալը կայացրեց ցեղասպանության հանցանքի դեմ միջազգային դատարանի կողմից երբևէ կայացված առաջին դատավճիռը, ինչպես նաև առաջին պատիժը նման հանցանքի համար:

Միացյալ ազգերի կազմակերպության հիմնական նպատակներից մեկն այն է՝ հանդիսանալ միջազգային մեխանիզմ



հաշվետվություն պահանջելու մարդու իրավունքների բազում խախտումների համար, գիտակցվեց 1988թ., երբ կառավարությունները համաձայնեցին հիմնել Միջազգային քրեական դատարան: Դատարանն ունի ցեղասպանության ոճրագործներին պատժելու և մարդկության դեմ ուղղված այլ հանցանքների համար նախատեսված բոլոր պատժամիջոցները: Դատարանի ստեղծման որոշումը քվեարկելիս միջազգային հանրությունը բոլորի համար պարզ դարձրեց, որ հանցանքներն ու ոճրագործություններն այլևս չեն կարող անպատիժ մնալ:

ՄԱԿ-ը մասնակցել է նաև միջազգային մարդասիրության օրենքի մասին կոնվենցիաների մշակմանը:

***Արդարությանն ու իրավահավասարությանն ուղղված այլ միջոցառումներ***

1945թ. 750 միլիոն մարդ էր ապրում ոչ ինքնակառավարվող տարածքներում: Այսօր այդ թիվը նվազել է մինչև 1,3 միլիոնի և հիմնականում շնորհիվ այն վճռորոշ դերի, որ խաղացել է ՄԱԿ-ը կախման մեջ գտնվող մարդկանց աջակցելու և անկախության նվաճման գործընթացը արագացնելու ուղղությամբ: Սկսած 1960թ., երբ Գլխավոր ասամբլեան ընդունեց Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրը, մոտ 60 նախկին գաղութային տարածքներ ձեռք բերեցին անկախություն և միացան ՄԱԿ-ին անկախ երկրների կարգավիճակով: Ասամբլեան նպատակ ունի վերջ տալ գաղութատիրությանը մինչև 2000 թվականը:

Ավելի քան 30 տարի տևած ՄԱԿ-ի գլխավորած շարժումը նպաստեց Հարավային Աֆրիկայում ռասայական խտրականության ապարտեիդի համակարգի վերացմանը: 1994 թվականին ՄԱԿ-ի դիտորդների առաքելությունը հետևում էր այդ երկրի առաջին համաժողովրդական ընտրություններին:

**ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԻՆՉՊԻՍԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՄԱԿ-ը**

Մարդկությանը սպառնացող աղետները կարող են տեղի ունենալ ցանկացած վայրում և ցանկացած ժամանակ: Անկախ բնույթից, լինի ջրհեղեղ թե երաշտ, երկրաշարժ թե

քաղաքացիական ընդհարում, նման աղետները նշանակում են կորսված կյանքեր, տեղահանված բնակիչներ, ծանր տառապանքներ և գոյատևելու անընդունակ մարդկային խմբեր:

#### ***Օգնություն արտակարգ իրավիճակներում***

Նման աղետների ժամանակ ՄԱԿ-ի անդամ կազմակերպությունները տուժածներին (մեծ մասը կանայք, երեխաներ, մեծահասակներ) ապահովում են սննդամթերքով, ապաստարանով, բժշկական միջոցներով, տեխնիկական օգնությամբ:

Այդ օգնությունը ֆինանսավորելու և կարիքավորներին տրամադրելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպությունը միջազգային դոնորներից հայթայթել է միլիարդավոր դոլարներ: 1998թ. ՄԱԿ-ի միասնական կոչերի շնորհիվ մոտ 2 միլիարդ ամերիկյան դոլարի արժողությամբ երաշխիք ձեռք բերվեց, որն արտակարգ իրավիճակներում կհատկացվի մոտ 25 միլիոն մարդու հումանիտար օգնությունը ֆինանսավորելու համար: 1997-1998թթ. ընթացքում ՄԱԿ-ը 51-ից ավելի անդամ երկրների օգնել է հաղթահարել ավելի քան 77 բնական աղետներ և շրջակա միջավայրի հետ կապված արտակարգ իրավիճակներ:

Հումանիտար օգնություն ցուցաբերելիս անհրաժեշտ է, որ ՄԱԿ-ը հաղթահարի տվյալ ոլորտի տեխնիկական և անվտանգության հարցերին առնչվող խոչընդոտները: Տուժած տարածքին մոտենալն արդեն իսկ կարող է լուրջ դժվարությունների հանգեցնել: Վերջին տարիների ընթացքում շատ ճգնաժամեր էլ ավելի են խորացել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի կորստի պատճառով: Հումանիտար օգնության ջոկատներին թույլ չի տրվել օգնության ձեռք մեկնել տուժածներին, իսկ ընդհարվող կողմերն իրենց գործողությունները միտումնավոր ուղղել են ընդդեմ քաղաքացիական և աջակցող ուժերին: Սկսած 1992թ. աշխարհում իրենց մարդասիրական պարտքը կատարելիս սպանվել են ՄԱԿ-ի ավելի քան 139 քաղաքացիական ծառայողներ և պատանդ են վերցվել 143-ը: Տեղում արտակարգ իրավիճակներին արձագանքելու և ճգնաժամերի ընթացքում մարդու իրավունքների խախտումները կանխելու գործընթացում մեծ է ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի դերը:

Մարդկությանն սպառնացող ճգնաժամերի ժամանակ ՄԱԿ-ը կորդինացնում է իր աշխատանքները օգնության հիմնական





մարմիններից կազմված հանձնաժողովի միջոցով, որը գլխավորում է ՄԱԿ-ի արտակարգ իրավիճակների օգնության գծով կոորդինատորը: Հանձնաժողովի անդամներն են. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF), ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը (UNDP), Պարենի համաշխարհային ծրագիրը (WFP), ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (UNHCR): Նրա կազմում ներկայացված են նաև ՄԱԿ-ի այլ գործակալություններ, ինչպես նաև հիմնական մարդասիրական օգնության միջկառավարական և հասարակական կազմակերպություններ:

### ***Մարդասիրական արձագանք***

Արտակարգ իրավիճակների օգնության գծով կոորդինատորը պատասխանատու է մարդասիրական օգնության քաղաքականության մշակման, մարդասիրական գաղափարների տարածման, հասարակական գիտակցության աճի, օրինակ, զենքի տարածման կամ պատժամիջոցների հասարակական հետևանքների մասին:

Բոլոր նրանք, ովքեր խուսափել են պատերազմից, հետապնդումից կամ մարդու իրավունքների չարաշահումներից, ինչպես օրինակ, փախստականները և իրենց բնակավայրերից տեղահանված անձինք, օգնություն են ստանում ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի (UNHCR) գրասենյակից: 1998թ. գրասենյակը զբաղվում էր մոտ 22 միլիոն մարդու հարցերով: Գրասենյակն իր ամենաձավալուն ծրագրերն իրականացրել է Արևմտյան Ասիայում (մոտ 2-3 միլիոն աֆղան փախստականներ), նախկին Հարավսլավիայում (մոտ 1,8 միլիոն օգնության կարիք ունեցողներ) և Աֆրիկայի Մեծ լճերի շրջանում (մոտ կես միլիոն փախստականներ):

Համաշխարհային պարենային ծրագիրը (WFP) զբաղվում է արտակարգ իրավիճակներում պարենի մատակարարմամբ և կանոնավոր կերպով բավարարում է աշխարհի գրեթե երկու երրորդ մասի պահանջները:

1997 թվականին ծրագիրը պարենային օժանդակություն է ցուցաբերել ընդհարումներից տուժած 19,1 միլիոն մարդու: Նույն ժամանակահատվածում ՀՊԾ-ն պարենային օժանդակություն է ցուցաբերել երաշտից ու ջրհեղեղից տուժած 10 միլիոն մարդու:

Վերջին տասը տարիների ընթացքում պատերազմի և քաղաքական կյանքի ընդհարումների հետևանքով 1 միլիոն երեխա մեկուսացվել է իր ծնողներից, 12 միլիոնը մնացել է

անօթևան, 10 միլիոնը խիստ տրավմայի է ենթարկվել: UNICEF-ը ջանում է բավարարել նրանց կարիքները՝ տրամադրելով սննդամթերք, խմելու ջուր, դեղամիջոցներ և ապաստարան: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը առաջինն է ձեռնարկել «Երեխաները որպես խաղաղության գոտի» գաղափարը, սկիզբ է դրել «Խաղաղ օրեր» և «Խաղաղության միջանցք» միջոցառումներին՝ նպատակ ունենալով պաշտպանել երեխաներին զինված ընդհարումների ժամանակ և ապահովել նրանց ամենակենսական ծառայություններով:

Աղետների կանխումն ու դրանց պատրաստ լինելը ևս կազմում են ՄԱԿ-ի մարդասիրական միջոցառումների մասը: 1998 թվականին, օրինակ, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը, աղետների դեմ պայքարի նպատակով 11 երկրներում ստեղծեց ներուժի ձևավորման ազգային ծրագրեր: Եվ աղետի դեպքում Ջարգացման ծրագիրը օժանդակության աշխատանքները կոորդինացնում է տեղական մակարդակով:

ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը աշխատանքներ է տանում նաև, որպեսզի արտակարգ իրավիճակներում հատկացվող օգնությունը նպատակի վերականգնմանն ու երկարաժամկետ կայուն զարգացմանը: Արտակարգ իրավիճակներից մեծապես տուժած կամ ետհակամարտության շրջանում գտնվող երկրներում մարդասիրական օգնությունը դիտվում է որպես զարգացման, քաղաքական, ֆինանսական օգնությանը զուգահեռ անցկացվող համընդհանուր խաղաղաստեղծ միջոցառումների մաս:

#### ***Ի՞նչ է անում ՄԱԿ-ը կայուն զարգացման համար***

ՄԱԿ-ի գլխավոր մանդատներից մեկը բարձր կենսամակարդակի, աշխատանքի, զբաղվածության, տնտեսական և սոցիալական առաջընթացի և կայուն զարգացման խթանումն է: ՄԱԿ-ի գործունեության ավելի քան 70 տոկոսն ուղղված է այս մանդատի կենսագործմանը: Այդ գործունեության առաջնիչ հավատամքն այն է, որ աղքատության վերացումն ու ամենուր մարդկանց կենսական պայմանների բարելավումն աշխարհի կայուն խաղաղության հաստատումն ապահովող ամիրաժեշտ քայլերն են:

ՄԱԿ-ը կայուն զարգացումը խթանող անփոխարինելի ուժ է: Նրա ներկայությունն ամենուր է, իսկ նրա բազմաբովանդակ մանդատը անդրադառնում է սոցիալական, տնտեսական և արտակարգ իրավիճակների պահանջներին: ՄԱԿ-ը չունի որևէ ազգային կամ կոմերցիոն շահագրգռություն: Կարևորագույն



քաղաքական որոշումներ կայացնելիս բոլոր երկրները՝ հարուստ քե աղքատ, ունեն ձայնի իրավունք:

### ***Օրակարգի կազմումը***

ՄԱԿ-ը վճռորոշ դեր է խաղացել կայուն զարգացմանն ուղղված գործողությունների վերաբերյալ միջազգային համաձայնության ձեռքբերման գործընթացում: Սկսած 1960 թվականից Գլխավոր ասամբլեան 10-ամյա տևողությամբ մի շարք միջազգային զարգացման ռազմավարությունների միջոցով օժանդակել է գերակայությունների ու նպատակների սահմանմանը: Տասնամյակների ընթացքում հետևողականորեն ընդգծվել է առաջընթացի անհրաժեշտությունը սոցիալական և տնտեսական զարգացման բոլոր բնագավառներում: Ջարգացման չորրորդ տասնամյակի (1991-2000թթ.) համար սահմանված չորս առաջնային ոլորտները հետևյալն են. աղքատություն և սով, մարդկային ռեսուրսներ և վարչական զարգացում, բնակչություն և շրջակա միջավայր:

Համաշխարհային մի շարք գիտաժողովներ ճանաչել են հետևյալ բնագավառների համընդհանուր խնդիրների լուծման գործնական ուղիները. կրթություն (1990թ.), շրջակա միջավայրի պահպանություն և զարգացում (1992թ.), մարդու իրավունքներ (1993թ.), բնակչություն և կայուն զարգացում (1994թ.), բնական աղետների հնարավոր նվազեցում (1994թ.), սոցիալական զարգացում (1995թ.), հասարակական կյանքում կանանց առաջադրում (1995թ.), մարդու կենսավիճակի կարգավորում (1996թ.), սննդամթերքի ապահովում (1996թ.): ՄԱԿ-ը ներկայումս սերտ համագործակցում է իր անդամ երկրների հետ այդ գիտաժողովներում կայացված որոշումների կենսագործմանն ուղղությամբ:

ՄԱԿ-ը գլխավորում է բազմաթիվ զարգացման նոր կարևոր ծրագրերի մշակման գործընթացը. դրանք են՝ կայուն զարգացում, հասարակական կյանքում կանանց առաջադրում, մարդու իրավունքներ, շրջակա միջավայրի պահպանություն և կառավարում, ինչպես և զարգացող ծրագրերի կենսագործում: Գլխավոր ասամբլեան այս բնագավառները մոտեցրել է զարգացման առավել ծանոթ ոլորտների, այն է՝ տնտեսական աճ, աղքատության վերացում, առևտուր, սոցիալական հարցեր: Ջարգացման քաղաքականության հիմունքները ներկայացնող սկզբնական տարբերակը վերնագրվել է «զարգացման օրակարգ»: 1997 թվականին ընդունված այս պայմանագիրը սահմանում է

միջազգային համագործակցության շրջանակները և հաստատում ՄԱԿ-ի կենտրոնական դերը տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված միջազգային օժանդակության բնագավառում:

***Չարգացմանն ուղղված օժանդակություն***

ՄԱԿ-ի համակարգը, որը ներկայացված է ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների, ՄԱԿ-ի ծրագրերի ու հիմնադրամների միջոցով, իր բազմաբնույթ գործունեությամբ խթանում է տնտեսական և սոցիալական ոլորտում առաջադրված խնդիրները:

Մասնագիտացված գործակալությունների լիազորություններն ընդգրկում են գրեթե բոլոր տնտեսական ու սոցիալական ոլորտները: Այդ գործակալությունները աշխարհի բոլոր երկրներին ցուցաբերում են տեխնիկական օժանդակություն և գործնական այլ բնույթի օգնություն:

Համագործակցելով ՄԱԿ-ի հետ՝ նրանք օգնում են մշակել քաղաքականություններ, չափանիշներ և ուղեցույցներ, խթանել օգնության միջոցառումները և կենտրոնացնել ֆինանսական միջոցները:

Համաշխարհային բանկն, օրինակ, տարեկան ավելի քան 20 միլիարդ ամերիկյան դոլար է հատկացնում զարգացման օժանդակության ծրագրերին: Չարգացող երկրներն այդ վարկերն օգտագործում են իրենց տնտեսություններն ամրապնդելու և շուկաները ընդլայնելու նպատակով:

Չնայած վարկերը տրվում են միայն կառավարությանը կայուն աճ ապահովելու նպատակով, բանկերն աշխատում են նաև տեղական համայնքների, հասարակական կազմակերպությունների և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) միջոցով, նաև մասնավոր ձեռնարկությունների հետ:

ՄԱԿ-ի և մասնագիտացված գործակալությունների միջև սերտ համագործակցությունն ապահովվում է Կորորդինացիայի վարչական հանձնաժողովի միջոցով, որը կազմված է Գլխավոր քարտուղարից, մասնագիտացված գործակալությունների ղեկավարներից և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունից:

ՄԱԿ-ի ծրագրերն ու հիմնադրամները գործում են Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական ու սոցիալական հարցերով խորհրդի ենթակայության տակ և կոչված են իրականացնելու ՄԱԿ-ի



տնտեսական և սոցիալական մանդատը: Ընդհանուր համագործակցությունն այդյունավետ դարձնելու նպատակով 1997թ. Գլխավոր քարտուղարը հիմնեց տնտեսական և սոցիալական հարցերով Գործադիր հանձնաժողով, որը կազմված է Քարտուղարության համապատասխան բաժիններից և գրասենյակներից, տարածաշրջանային հանձնաժողովներից, ՄԱԿ-ի հետազոտական մարմիններից, ՄԱԿ-ի Ջարգացման խմբից, որն էլ իր հերթին բաղկացած է ՄԱԿ-ի գործող հիմնադրամներից և ծրագրերից:

Սոցիալական և տնտեսական առաջընթացի հասնելու գործընթացը գլխավորում է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը (UNDP): Սա սոցիալական կայուն զարգացմանն ուղղված ամենախոշոր և բազմաբնույթ դրամական նպաստներ շնորհող ծրագիրն է: Գործում է 174 երկրներում ու տարածքներում և կոչված է նպաստելու տեխնիկական համագործակցությանն ու աղքատության վերացմանը:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF) երեխաների երկարաժամկետ զոյատևումը, պաշտպանությունը և բարեկեցիկ կյանքն ապահովող ՄԱԿ-ի գլխավոր կազմակերպությունն է: Մոտ 150 երկրներում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ուշադրության կենտրոնում երեխաների պատվաստման, առաջնային բուժօգնության, խնամքի և կրթության խնդիրներն են:

ՄԱԿ-ի մնացած ծրագրերը զարգացմանն ուղղված իրենց գործունեության մեջ համագործակցում են կառավարության և հասարակական կազմակերպությունների հետ: Համաշխարհային պարենային ծրագիրը (WFP) սննդամթերքի օգնություն հատկացնող աշխարհի ամենախոշոր կազմակերպությունն է՝ որպես և՛ արտակարգ իրավիճակների օգնության ծրագրի, և՛ զարգացման ծրագրերի մաս: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը (UNFPA) բնակչությանն օգնություն հատկացնող միջազգային ամենախոշոր հիմնադրամն է: ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի պահպանության ծրագրի (UNEP) նպատակն է ամենուր խրախուսել առողջ միջավայրի պահպանումը: Իսկ ՄԱԿ-ի Մարդու կենսավիճակի կարգավորման կենտրոնն (UNCH) (Habitat) օգնում է առողջության համար վտանգավոր պայմաններում ապրող մարդկանց:

Համընդհանուր տնտեսության մեջ զարգացող երկրների մասնակցությունը խրախուսելու համար ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման գիտաժողովը (UNCTAD) նպաստում է միջազգային առևտրի զարգացմանը: Գիտաժողովը համագործակցում է նաև

Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO) հետ, որն առանձին կազմակերպություն է և ժնկում գտնվող Առևտրի միջազգային կենտրոնի միջոցով նպաստում է զարգացող երկրներից արտադրանքի արտահանմանը:

ՄԱԿ-ի համակարգը առավելագույնս կենտրոնացնում է իր ուժերը, որպեսզի կարողանա զբաղվել այնպիսի դժվարին խնդիրներով, որոնք դեռևս չեն հանդիպել գործունեության մեջ և որոնք ինքնուրույն գործել ձգտող ցանկացած երկրի համար մեծ դժվարություն են ներկայացնում:

ՉԻԱՀ/ՄԻԱՎ -ի միասնական ծրագրում, օրինակ, իրենց փորձն են միավորել ՄԱԿ-ի վեց գործակալություններ և ծրագրեր, որոնք փորձում են պայքարել մի համաճարակի դեմ, որով ամբողջ աշխարհում ախտահարվել է ավելի քան 45 միլիոն մարդ: ՄԱԿ-ի 10 տարվա տևողությամբ և 25 միլիարդ ամերիկյան դոլար արժողությամբ հատուկ նախագիծն Աֆրիկայում ՄԱԿ-ի գործունեության գրեթե բոլոր ոլորտները միացնում է մեկ ընդհանուր ծրագրում, որի նպատակն է ապահովել հիմնական կրթության, առողջապահական ծառայությունների և անվտանգ սննդամթերքի առկայությունը այդ մայր ցամաքում: Շրջակա միջավայրի պահպանության 2 միլիարդ ամերիկյան դոլար արժողությամբ համընդհանուր ծրագիրը ղեկավարվում է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի, Շրջակա միջավայրի պահպանության ծրագրի ու Համաշխարհային բանկի կողմից: Այն օգնում է զարգացող երկրներին Շրջակա միջավայրի պահպանության ծրագրեր իրականացնել:

1998թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը, Համաշխարհային բանկը և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը սկսեցին միասնական ուժերով պայքարել մալարիայի դեմ, որը տարեկան սպանում է ավելի քան 1 միլիոն մարդ: Այդ ուղղությամբ միջոցառումները կիրականացվեն միջազգային կազմակերպությունների, կառավարությունների, ակադեմիական հաստատությունների, մասնավոր սեկտորի և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

#### ***Մասնագիտացված գործակալություններ***

Ինքնավար կազմակերպությունները ՄԱԿ-ին են միացել հատուկ պայմանագրերով:

- ***(ՈՕ) Աշխատանքի միջազգային կազմակերպություն***  
Աշխատանքի պայմաններն ու աշխատանքային



հնարավորությունները բարելավելու նպատակով մշակում է քաղաքականություն, ծրագրեր, ինչպես նաև աշխատանքի ստանդարտներ, որոնք օգտագործվում են ամբողջ աշխարհում:

- **FAO (ՄԱԿ-ի սպարենի և գյուղատնտեսության կազմակերպություն)**

Նպաստում է գյուղատնտեսական արտադրողականության, սննդամթերքի անվտանգության ապահովմանը, ինչպես նաև գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

- **UNESCO (ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն)**

Խթանում է կրթության, մշակույթի, աշխարհի բնական և մշակութային ժառանգության զարգացումը, գիտության մեջ միջազգային համագործակցությունը, մամուլի ու հաղորդակցման ազատությունը

- **WHO (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն)**

Կորորինացնում է առողջապահական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը և համայն մարդկության համար հնարավորինս ապահովում է բարձրագույն մակարդակի առողջություն: Այն գործում է պատվաստման, առողջապահական կրթության և կենսական դեղամիջոցների մատակարարման բնագավառում:

- **World Bank Group (Համաշխարհային բանկի խումբ)**

Աղքատությունը նվազեցնելու և կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով վարկեր է տրամադրում և տեխնիկական օգնություն ցույց տալիս զարգացող երկրներին:

- **IMF (Միջազգային արժույթային հիմնադրամ)**

Նպաստում է միջազգային արժույթային համագործակցությանն ու ֆինանսական կայունացմանը, ապահովում է խոհրդատվության և ֆինանսական հարցերի վերաբերյալ մշտական համաժողովներով:

- **ICAO (Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպություն)**

Մշակում է օդային տրանսպորտի անվտանգության, ապահովության և արդյունավետության համար անհրաժեշտ միջազգային ստանդարտներ և քաղաքացիական ավիացիայի բոլոր օդակներում ծառայում է որպես միջազգային համագործակցության կորորինատոր:

- **UPU (Համընդհանուր փոստային միություն)**  
Փոստային ծառայությունների համար սահմանում է միջազգային կանոններ, ցույց է տալիս տեխնիկական օգնություն և փոստային խնդիրների առնչությամբ նպաստում համագործակցությանը:
- **ITU (Միջազգային հեռահաղորդակցման միություն)**  
Հեռահաղորդակցության բոլոր տեսակների զարգացման նպատակով խթանում է միջազգային համագործակցությունը, կոորդինացնում ռադիոյի և հեռուստատեսության հաճախականությունների օգտագործումը, նպաստում անվտանգության միջոցների զարգացմանն ու հետազոտությունների անցկացմանը:
- **WMO (Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն)**  
Խթանում է երկրի մթնոլորտում և եղանակի փոփոխությունների հետ կապված գիտական հետազոտությունների անցկացումը, հեշտացնում օդերևութաբանական տվյալների ընդհանուր փոփոխությունը:
- **IMO (Միջազգային ծովային կազմակերպություն)**  
Աշխատում է միջազգային ծովային փոխադրումների, ծովային անվտանգության ստանդարտների բարելավման և նավերի կողմից ծովային աղտոտումը նվազեցնելու ուղղությամբ:
- **WIPO (Համաշխարհային մտավոր սեփականության կազմակերպություն)**  
Խթանում է մտավոր սեփականության միջազգային պաշտպանությունը և համագործակցությունը հեղինակային իրավունքի, ապրանքանիշերի, արդյունաբերական դիզայնի և արտոնագրերի ոլորտում:
- **IFAD (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ)**  
Կենտրոնացնում է ֆինանսական միջոցները զարգացող երկրներում սննդի արտադրության և սնուցման մակարդակը բարձրացնելու համար:
- **UNIDO (ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպություն)**  
Տեխնիկական օժանդակության, խորհրդատվական ծառայությունների և վերապատրաստման միջոցով խթանում է զարգացող երկրների արդյունաբերական առաջընթացը:
- **IAEA (Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն)**  
Լինելով ՄԱԿ-ի հովանավարության տակ գործող ինքնավար,





միջկառավարական կազմակերպություն՝ գործակալությունը  
խթանում է միջուկային էներգիայի օգտագործումը անվտանգ  
և խաղաղանպաստ նպատակների համար:





































